Հայկազ Հովհաննիսյան
Պատմական գիտությունների դոկտ., պրոֆեսոր

ՍՈՒՐՄԱԼՈՒ ԳԱՎԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Սուրմալու գավառի հայկական գյուղերին և գավառի ընդհանուր ժողովրդագրությանը վերաբերող տեղեկություններում մեր պատմաբաններն ու հետազոտողները շրջանցել և խուսափել են հարցը մանրամասնելուց: Ավելին, մեզանում այն թյուր տեսակետն է, թե հայերը փոքրամասնություն են կազմել գավառում, և հարցն այդպես էլ համարվել է փակված: Մինչդեռ մեր կողմից կատարված արխիվային վավերագրերի և մարդահամարի տվյալների ուսումնասիրությունները, ընդհակառակը, բերել են այն հաստատմանը, որ հայ ազգաբնակչությունը մեծամասնություն է կազմել գավառում բնակվող հիմնական ազգությունների՝ քրդերի և թուրքերի համեմատ:

Բնականաբար, պատմագիտական հարցի քննության առաջին և վերջնական ապացույցը մարդահամարի արդյունքներն են, արխիվային վավերագրերի և մամուլի հաստատումները, ինչին էլ մենք խստորեն կհետևենք:

Այսպես, ուրեմն, 1886 թ. անցկացված Ռուսաստանյան մարդահամարի տվյալներով Սուրմալուում եղել է 234 բնակավայր, որոնցից գյուղեր էին 141-ը, ձմեռանոցներ՝ 93-ը: Գավառի հիմնական բնակչությունը կազմել են հայերը, թուրքերը և քրդերը: Վեց տուն եղել են ասորիները:

Գավառի հայությունը մեծամասամբ բաղկացած է եղել հարյուրամյակներով այստեղ բնակություն հաստատած տեղացի հայերից, ինչպես նաև ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից գաղթած հայերից: Ինչպես նշվում է ռուսական աղբյուրներից մեկում, «Այստեղի հայերը խստորեն պահպանում են իրենց ավանդույթներն ու սովորությունները, հավատարիմ են եկեղեցական ավանդույթներին: Գիտելիքի և կրթության հանդեպ ծարավը հատուկ է այստեղի բոլոր հայերին, քան, ասենք, թուրքերին կամ մյուս ազգերին: Այդ է պատճառը, որ պետության կողմից բացված դպրոցներն արագորեն լցվում են հայ մանուկներով: Ընտանեկան կյանքում հայերը բավականին համերաշխ են: Դրան հակառակ, թուրքերը խուսափում են իրենց երեխաներին դպրոց ուղարկել, ակնհայտ է նաև թշնամանքը միմյանց նկատմամբ:

Թեպետ հայ կանայք վարում են փակ կյանք, սակայն աչքի են ընկնում աշխատասիրությամբ և ոչնչով չեն զիջում տղամարդկանց, եթե չասենք ավելին. հազվադեպ կարելի է տեսնել հայուհու, որն անգործ լինի: Նրանց վրա է ընկած տնտեսության հոգսի մեծ մասը, երեխաների դաստիարակությունը և դաշտային ծանր աշխատանքները»[1]:

Նույն 1886 թ. մարդահամարի տվյալների համաձայն Սուրմալուում հայկական տների թիվը կազմել է 2196, որում ապրել են 20.238 շունչ. նրանցից արական սեռի՝ 10.541, իգական սեռի՝ 9.697: Եթե համեմատելու լինենք գավառի թուրքական հա-

[1] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказья, Тифлис, 1886, т. 3, с. 235.

մայնքի հետ, ճիշտ է, հայերը ծխերի թվով փոքր-ինչ զիջում էին թուրքերին՝ 2617, սակայն մյուս կողմից, շնչերի թվաքանակի տեսակետից թուրքերը զիջել են հայերին՝ 18.190: Այս փաստը բացատրվում է այն հանգամանքով, որ հայերն իրենց համախմբվածությամբ և ընտանիքների բազմանդամությամբ գերազանցել են թուրքերին և նախընտրել են համախումբ ապրելակերպը: Բնական աճի տեսակետից հայերը ևս առավելություն են ունեցել թուրքերի հանդեպ: Այսպես, նույն աղբյուրի համաձայն 1886 թ. հայերն ունեցել են 171 ծխի աճ, թուրքերը միայն՝ 116: Հայերի թվական աճը կազմել է 3436, թուրքերինը՝ միայն 1345:

Ինչ վերաբերում է քրդական համայնքին, ապա պատկերն այսպիսին է. քուրդ մուսուլմաններ՝ 948 ծուխ (6480 շունչ), քուրդ-եզդիներ՝ 469 ծուխ (4840 շունչ): Այլ խոսքով, առանձին վերցրած, հայկական տարրի աճը գավառում 1886 թ. կազմել է 8.44%, թուրքերինը՝ 4.64%, քրդերինը համապատասխանաբար՝ 0.42 և 2.98 տոկոս[1]:

Ինչպես երևում է վերոհիշյալ թվերից, հայերի տղամարդկանց և կանանց թվաքանակը գրեթե հավասար է. միջին հաշվով յուրաքանչյուր հայկական տան մեջ տղամարդկանց տոկոսային հարաբերությունը կազմել է 4.80, կանանցը՝ 4.41: Կրոնական հավատքի տեսակետից բոլոր հայերը, բացառությամբ հատուկենտ դեպքերի, եղել են հայկական առաքելական եկեղեցու հետևորդներ:

Թե՛ բնիկները և թե՛ գաղթածների մեծ մասը իրենց բնավորությամբ ու սովորություններով, բարբառով ու ընտանեկան կյանքի առանձնահատկություններով, անշուշտ, նմանություններ ունեցել են: Գաղթածների մեջ հատկապես աչքի են ընկել Մասիսի ստորոտներում տեղակայված Իգդիր, Իգդիր-Մովա և Ալի-Ղամարլու գյուղի բնակիչները, որոնք գաղթել են 1828 թ. Պարսկաստանի Խոյ և Սալմաստ նահանգներից՝ իշխան Մովսես Արղության-Երկայնաբազուկի առաջնորդությամբ:

Այդ իսկ պատճառով Սուրմալուի հայ ազգաբնակչությունը կարելի է բաժանել երկու խմբի՝ Պարսկաստանից գաղթածներ, որոնց գավառում տեղացիները կոչել են մեկ բառով՝ խոյեցիներ, մյուս խումբը, ինչպես արդեն նշեցինք, կազմել են տեղաբնիկները և այլ վայրերից գաղթածները: Այս երկրորդ խմբի բնակչությանը խոյեցիները, իրենց հերթին անվանել են մեկ բառով՝ հռոներ: Հռոներ են, օրինակ, պատմական Կողբ գյուղի բնակիչները, Մոլլա-Կամարի, Կուլաբի կամ Գյուլլուջայի, Աբաս-Գյոլի լեռնային գյուղերի բնակիչները, որոնք զանազան ժամանակներում գաղթել են նշված գյուղերը և մեծամասամբ արևմտահայեր էին:

Սուրմալուի դաշտային շրջանի գյուղերից տեղաբնիկ են համարվում Բլուր, Փանիկ, Ալեթլու, Դաշբուրուն, Խոշխաբար, Խալֆալու գյուղերի բնակիչները: Ինչ վերաբերում է **հռո** բառին, ապա այն պարզապես **կռո (կոպիտ)** բառի աղճատված ձևն է: Այս երկու խմբերը, որոնք, իհարկե, ապրել են հաշտ ու համերաշխ և ժամանակի ընթացքում համակերպվել են միմյանց և միայն գինովցած պահերին հաճախ են հիշեցրել իրենց ծագումը՝ ինչպես ասում են՝ կես լուրջ, կես կատակ: «Այս ժողովուրդը,- գրում է «Մշակ» թերթը 1890 թ.,- որ գաղթել է Պարսկաստանից, մի վերին աստիճանի ընդունակ ժողովուրդ է՝ գոյության կռվի մեջ հաստատվելու կյանքի զորեղ պայմաններով... Խոյի և Սալմաստի հայերը որքան ընդունակ են հարստանալու, նույնքան էլ ընդունակ են այս հարստությունը օգտակար կերպով գործի դնելու մեջ.

[1] Նույն տեղում, էջ 242:

անհրաժեշտ են միայն գործի գլուխ կանգնած մարդիկ»[1]: Համաձայնվենք, որ արժանի գնահատական է թե՛ տեղաբնիկ և թե՛ գավառը շենացրած Խոյ - Սալմաստից գաղթած հայերի հասցեին:

Իրենց քանակությամբ բավականին մեծ թիվ է կազմել մահմեդական բնակչությունը, որը ռուսական աղբյուրներում հիշատակված է մեկ հատկանիշով՝ ***թաթարներ***: Սրանց գերակշիռ մասը կրոնական տեսակետից եղել են շիա-մահմեդականներ, ինչը բացատրվում է երկարատև պարսկական տիրապետությամբ:

Իրենց քանակությամբ թաթարներից հետո գավառի օտարազգի բնակչության մեջ երկրորդը եղել են ***քրդերը***: Նրանք կազմել են գավառի բնակչության 20 տոկոսը (19.200 շունչ, 1897 թ. տվյալներով)[2]: Սուրմալուի քրդական համայնքները ըստ գործառական մատյանների 20 են եղել, մեծամասամբ պատկանել են Ջալալի, Կրմանջի և Ջազա ցեղախմբերին: Քրդական համայքները մեծ մասամբ ապրել են ձմեռանոցներում և հիմնականում զբաղվել են անասնապահությամբ: Քրդական համայքներից հատկապես հայտնի են եղել երեքը՝ Բիլիջան, Ջալալի Բանուկին և Ղաբաղը: Քրդական համեմատական մեծ համայնքներ բնակություն են հաստատել Մեծ և Փոքր Ռադիկիներում և Սինակում:

Բնականաբար, Սուրմալուի քրդերը սերտ կապեր են ունեցել Թուրքիայի և Պարսկաստանի տարածքներում ապրող իրենց ցեղակիցների հետ, ուստի ապրել են այդ երկրներին սահմանակից վայրերում: Քանի որ նրանք կրոնական տեսակետից նույնանում էին թուրքերի հետ, ուստի մեկ անգամ չէ, որ փորձ են արել իրենց կողմը քաշել քրդերին՝ հայերի դեմ միասնական ճակատ ստեղծելու համար: Բնականաբար, այս հանգամանքը մշտապես բարդացրել է այն հայկական գյուղերի վիճակը, որոնք գտնվում էին թուրքական կամ քրդական գյուղերի շրջափակման մեջ, ինչպիսին, օրինակ, Դաշբուրունն ու Կողբն էին: Ավելին, շատ հաճախ թուրքերը իրենց հավատակիցներին ռուսական իշխանությունների հետապնդումներից պաշտպանելու համար «հրավիրել» են սահմանամերձ տարածքներ՝ բնակության համար: Ընդհանրապես թուրքերը աչալրջորեն հետևել են քրդերի տրամադրություններին և առիթը բաց չեն թողել աջակցելու նրանց հակահայկական և հակառուսական գործողություններին:

Թվաքանակի տեսակետից քրդերին հաջորդում էին ***եզդիները***, որոնք, ճիշտ է, ազգագրական կենցաղով, նիստ ու կացով քրդական ցեղերից էին, սակայն նրանցից տարբերվում էին կրոնական հատկանիշով. եզդիները հեթանոս են և զրադաշտ: Վերջիններս Սուրմալուի գավառում հաշվել են մոտ 10 հազար շունչ[3]:

Գավառում իրենց թվաքանակով հատկապես առանձնացել են Հասանլու-եզդիները, որոնք ապրել են թուրքական սահմանի և Չինգիլի բարձունքների մոտ: Ինչպես թուրքերը, այնպես էլ քրդերը եզդիներին համարել են իրենց թշնամի և պատրաստ են եղել ամեն կերպ վնաս պատճառել նրանց: Իհարկե, եզդիներն էլ, իրենց հերթին, նույն վերաբերմունքն էին դրսևորում վերջիններիս հանդեպ: Սակայն քանի որ փոքրաթիվ են եղել քրդերի ու թուրքերի համեմատությամբ, ուստի աշխատել են խուսափել բացահայտ ընդհարումից: Եվ, այդուհանդերձ, մինչև 19-րդ դարի սկիզբը, եզդիները համարվել են հարուստ և ուժեղ ցեղախումբ, սակայն 1832 թվականին,

[1] Տե՛ս «Մշակ» 1890, № 85:
[2] Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 375, g. 1, գ. 21, թ. 26:
[3] Նույն տեղում, թ. 36:

երբ քուրդ-սունիները Ռանդուզ փաշայի գլխավորությամբ հարձակվեցին նրանց վրա, շատերը կոտորվեցին և նրանց թվաքանակը նվազեց: Այդ ժամանակից սկսած՝ բավականին թուլացավ նաև եզդիների ունեցած դերակատարությունը գավառում[1]:

Ասվածին մեկ լրացում ևս: Ճիշտ է՝ Սուրմալուի գավառի ժողովրդագրական տվյալները հեղինակների մոտ չեն համընկնում, սակայն մեր դիտարկմամբ ժողովրդագրական ընդհանուր պատկերը դրանից չի փոխվում: Այսպես, օրինակ, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Կարապետ Կուսիկյանի հաշվումներով նույն 1886 թ. Սուրմալուի տարածքը կազմում էր 3.241 քառ. կմ, բնակչության ընդհանուր թիվը՝ 89.075 հազ.: Ընդ որում հայերի թիվը գավառում հաշվվում էր 27.075, թուրքերինը՝ 21.417, քրդերինը՝ 19.099, ռուսներինը՝ 1361 և այլ ազգեր՝ 103[2]: Ինչպես նկատում ենք, թեպետ թվական տվյալները փոքր-ինչ այլ են, սակայն ընդհանուր պատկերը և հայ բնակչության թվական առավելությունը մյուս ազգությունների հանդեպ ակնհայտ է:

Հետագայում միայն հայերի թվաքանակը գավառում փոքր-ինչ նվազեց. 1913 թ. տվյալներով հայերը կազմում էին 35.455, մահմեդական բնակչությունը՝ 41.835, որից քրդեր էին 17.227[3]: Այստեղ անպատճառ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Սուրմալուի հայկական բնակչության թվի նվազումը ամենից առաջ կապված էր հայության ընդհանուր զարգացման հետ. շատերը կրթություն ստանալով գավառի սահմաններից դուրս՝ մշտական բնակություն էին հաստատում համեմատաբար զարգացած արդյունաբերական կենտրոններում: Սակայն նույնիսկ այս վիճակագրությունը մեզ թույլ է տալիս կրկին պնդելու, որ հայությունը շարունակում էր գերիշխող դիրք ունենալ գավառի տնտեսական և մշակութային կյանքում:

Բնակչության տեղաբաշխումը: Աշխարհագրական դիրքի տեսակետից Սուրմալուն բաժանվել է երկու մասի՝ լեռնային և հարթավայրային:

Լեռնային մասում հիմնականում տեղաբաշխված են եղել քրդական և թուրքական գյուղերը: Այս շրջանների բնակչությունը բավականին անտարբեր վերաբերմունք և մասնակցություն է ունեցել գավառի տնտեսական կյանքին, էլ չենք խոսում մշակութային և մյուս ոլորտների մասին. գյուղերի մեծ մասը ուղղակի ձմեռանոցներ են եղել: Մեկ կարևոր հանգամանք ևս. եթե նկատի ունենանք նույնիսկ, որ այս շրջանների գյուղերը իրենց թվաքանակով գերազանցել են հայկականին, սակայն բնակչության ընդհանուր քանակով բավականին զիջել են հայկական բնակչությանը: Համեմատության համար, օրինակ, բերենք այդ շրջանի ամենամեծ գյուղերից մեկի՝ Թոնդուրեկի շրջանի Ղազիփորան գյուղի վիճակագրությունը: Այն ունեցել է ընդամենը 40 տուն և 286 բնակիչ: Եվ, ընդհանրապես, քրդական շատ գյուղեր ունեցել են ընդամենը 20, 15, 9, նույնիսկ 3-4 ծուխ, ինչպես, օրինակ, Ինջիսու գյուղը (4 ծուխ և 27 բնակիչ), կամ ասենք, Ներքին Թուքը՝ ընդամենը 3 ծուխ և 20 բնակիչ:

Ուստի, թեպետ հետագա տարիներին և հատկապես թուրք-պարսկական պատերազմների ընթացքում հայկական լեռնաշխարհը ենթարկվեց ժողովրդագրական խեղումների, այդուհանդերձ գավառի հայկականության կնիքը ամենուրեք կարելի էր տեսնել: Հետևենք, օրինակ, թե ինչ է գրում «Մշակ» թերթը 1889 թվականին. «Թուրքաբնակ Արհաջ գյուղը գտնվում է Մեծ Մասիսի արևմտյան կողմում, հին Բա-

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, ֆ. 7, ց. 1, գ. 156, թ. 15:
[3] Տե՛ս «Кавказский календарь», 1913 г., с. 172-174:

յազետ տանող ճանապարհի և Իգդիրից 6 վերստ հեռավորության վրա: Սակայն բլրի գագաթին այսօր էլ դեռ երևում են հայկական հին ամրոցի հետքերը և ուղտատեղին՝ Սբ. Գևորգ եկեղեցին: Այս բոլորը ենթադրել է տալիս, որ մի ժամանակ բնակատեղին եղել է հայաբնակ գյուղ: Ենթադրվում է նաև, որ այս գյուղը պետք է լինի Մովսես Խորենացու հիշատակած Փառախոտը. «Ամասիա... հետ ծնանելոյ զնոսա (զԳեղամ, զՓառուխ և զՑոլակ) անցանէ զգետակն մերձ ի լեառնն հարաւոյ (Արարատ) և շինէանդ առ...»[1]:

Այլ խոսքով՝ եթե փորձենք աղյուսակի տեսքով ներկայացնել Սուրմալուի հայկական գյուղերի բնակչության աճի դինամիկան, ապա առանձին տարիներին այն հետևյալ տեսքն ունի.

Սուրմալուի հայկական գյուղերի աճի դինամիկան
(1831- 1886 թթ.)

N	*Գյուղերի անվանումները*	1831 թ.		1842 թ.		1859 թ.		1886 թ.	
		տուն	*շունչ*	*տուն*	*շունչ*	*տուն*	*շունչ*	*տուն*	*շունչ*
1.	*Ալի-Ղամարլու*	101	514	47	210	106	422	126	1045
2.	*Ալեթլու*	39	287	36	185	46	397	93	694
3.	*Ալիջան*	19	139	33	146	38	320	87	666
4.	*Աբաս- Գյոլ*	- *	-	-	-	14	86	44	355
5.	*Ակոռի*	218	1358	-	-	-	-	-	-
6.	*Բահարլու*	32	216	40	151	55	483	125	953
7.	*Բլուր*	78	539	91	444	84	679	192	1463
8.	*Գյուլլուջա*	54	341	59	350	41	398	88	789
9.	*Դաշբուրուն*	74	426	57	214	90	833	184	1673
10.	*Էվջիլար*	70	420	83	416	73	744	172	1277
11.	*Թեյջրլու*	40 133	253	42	232	48	435	104	809
12.	Իգդիր	-	24	83	296	146	1284	366	2912

[1] «Մշակ», 1889, № 45, **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, ԺԲ, Ա գլուխ, 41:

13.	Իգդիր Մովա	50	-	-	-	36	271	82	586
14.	*Խալֆալու*	52	262	36	137	54	355	121	892
15.	*Խոշ-Խաբար*	166	301	38	164	46	384	82	617
16.	*Կողբ*	51	473	-	-	-	-	372	3074
17.	*Հախվեիս*	43	283	36	148	56	400	126	942
18.	*Ղազի-Ղշլաղ*	8	230	19	98	-	-	42	293
19.	*Մուրշուդ-Ալի* (հայ-թուրք.)	52	45	79	344	37	272	77	507
20.	*Մոլլա -Կամար*	30	332	29	120	26	198	56	409
21.	*Նաջաֆ-Ալի*	44	203	24	117	30	225	58	404
22.	*Փանիկ*	-	265	58	258	67	661	144	960
23.	*Ալի-Կիզիլ*	-	-	-	-	-	-	58	414
24.	*Ղրաջ-Բաղ*	6	-	-	-	-	-	22	178
25.	*Կիզիլ-Զաքիր* (հայ-թուրք.)	-	33	-	-	-	-	32	184
26.	*Զամբուրդ*	-	-	-	-	-	-	28	154
27.	*Զաքրլու*	-	-	-	-	14	121	-	-
28.	*Ալի-Ղշլաղ*		-	-	-	28	270	-	-
30.	Հուսեյին-Քենդ	29							
31.	*Զիլֆիկար* (հայ-թուրք.)	23	158	-	-	-	-	-	-
	Իբրահիմ-Աբադ (հայ-թուրք.)	74	166	-	-	-	-	-	-
			385	-	-	-	-	-	-

* Ծնք. Այդ տարիների համար տվյալները բացակայում են:

Կարծում ենք՝ ընթերցողին կհետաքրքրի նաև Սուրմալուի հայկական գյուղերի մասին հանրագիտարանային բնույթի այս տեղեկությունները[1].

ԱԼԵԹԼՈՒ, Алетло́ - Հայկական գյուղ Սուրմալուի գավառի արևելյան կողմում: Զբաղվել են երկրագործությամբ և անասնապահությամբ: Բնակիչները, 1918-1920 թթ. տեղահանվելով՝ անցան Արարատյան դաշտ և բնակություն հաստատեցին տեղի գյուղերում:

ԱԼԻՋԱՆ, Алиджан - Սուրմալուի գավառի հայկական գյուղերից է, գտնվում էր Մարգարա գյուղի հարևանությամբ՝ մոտ 2 կմ հարավ-արևմուտք՝ Արաքսի աջ ափին: 1913 թվականին ունեցել է 145 տուն՝ մոտ 1000 հայ բնակչով: Զբաղվում էին երկրագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: 1918-1920 թթ. բնակիչների մեծ մասը անցավ Արաքսի ձախ ափը և վերաբնակվեց Արարատյան դաշտի գյուղերում:

ԱԲԱՍ ԳՅՈԼ, Абас гель - Հայկական գյուղ Սուրմալուի գավառում՝ Գայլատու լճից հյուսիս գտնվող Աբասգյոլ լճակից հարավ-արևմուտք, լեռներով շրջապատված գոգավորությունում: Ուներ 670 բնակիչ՝ գերազանցապես հայեր, որոնց նախնիների մի մասը Արևմտյան Հայաստանի տարբեր տեղերից և Պարսկահայքից եկել ու բնակություն են հաստատել 1828-1829 թթ: Գյուղի շրջակայքում կային քարածխի պաշարներ: 1918-1920 թթ. կոտորածներից փրկվելով՝ բնակիչները ապաստանեցին Արարատյան դաշտի գյուղերում: Գյուղն ունեցել է մաքսատուն, փոստակայան, պահպանվում էր նաև Սուրբ Սարգիս եկեղեցին, հայկական հին գերեզմանատունը՝ տապանագրերով:

ԱԿՈՌԻ, Акори, Ахури, **Ագգուրի, Ախորի, Ախուրի, Ակուրի, Աղուրի, Արգուրի, Արկուրի, Արղուրի, Աքուրի, Աքուրլու -** Գյուղ(ավան) Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Մասյացոտն գավառում, Մեծ Մասիսի հյուսիսարևմտյան լանջին, անդնդախոր վիհի եզրին՝ մոտ 1800 մ բարձրության վրա: Համանուն գետակը, որ հնում կոչվել է Գինո գետ, Ակոռին բաժանել է երկու մասի: Գյուղի մեծագույն մասը գտնվել է գետի աջ ափին: Ձախ կողմում՝ եկեղեցու դիմաց, կանգնած է եղել քառակուսի քարաշեն ամրոցը: Մերձակա մի բլրի գագաթին գտնվել են լայնատարած պալատի որմեր: Ըստ Հայսմավուրքի ավանդության իբր Նոյ Նահապետը տապանից դուրս գալուց հետո այստեղ առաջին անգամ տնկել է խաղողի որթ կամ ուռենու տունկ, այսինքն՝ «արկուռի», որից էլ առաջացել է այդ տեղում հիմնադրված բնակավայրի **Արկ ուռի** և ապա **Ակոռի** անունը: Ակոռի անվան մյուս տարբերակները սրանց օտար արտասանությունների և տառադարձությունների հետևանք են: Առաջին անգամ հիշատակվում է Ղ. Փարպեցու կողմից՝ 481-484 թթ. հայ ազատագրական պատերազմի առնչությամբ: Ակոռիի 481 թվականի ճակատամարտում Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ հայկական ապստամբ զորագունդը փայլուն հաղթանակ տարավ պարսից մի քանի անգամ գերազանցող բանակի դեմ: 702-703 թթ. ապստամբության ժամանակ՝ 703 թ. հունվարի 26-ին, Ակոռիի մոտ ճակատամարտում Սմբատ Բագրատունու գլխավորությամբ հայկական զորքերը հաղթեցին արաբական զորաջոկատին:

Միջին դարերում Ակոռին հիշատակվում է շատ պատմիչների երկերում որպես մեծ ավան և Խորվիրապի եպիսկոպոսական թեմի կենտրոն: Նոր ժամանակներում

[1] Տեղեկությունների մեծ մասը սիրով մեզ է տրամադրել բանահավաքը:

եղել է Երևանի սարդարների ամառանոցը: Ակոռիի Սուրբ Առաքելոց եկեղեցին կառուցել է տվել Անաստաս Ա Ակոռեցի կաթողիկոսը 661-667 թթ.: Այն ոչ մեծ գմբեթավոր շինություն էր, որին կից կար նաև հյուրատուն և աղքատանոց: Ակոռիից մոտ 300 մ վերև, Ակոռի գետակի աջ կողմում էին գտնվում Սուրբ Հակոբ վանքը և «հրաշագործ» աղբյուրը: Վանքի արձանագրությունները 13-14-րդ դարերի թվագրություն ունեն: Այստեղ է ծնվել նաև գրիչ և մանրանկարիչ Գրիգոր Ակոռեցին (11-րդ դ): Ակոռիում եղել են Աբրահամ Կրետացին, ֆրանսիացի ճանապարհորդ Ֆ. Դյուբուան և գերմանացի գիտնական Ֆրիդրիխ Պարրոտը: Նշանավոր գիտնական Հ. Աբիխը 1844-ին այստեղ զբաղվել է երկրաշարժի հետևանքների ուսումնասիրությամբ:

19-րդ դարի պատմագիտական գրականության մեջ հանդիպող նկարագրությունների համաձայն՝ Ակոռին ունեցել է քարաշեն, տափակ տանիքով տներ: Բնակչության թվի մասին տեղեկությունները հակասական են: Ըստ Մեսրոպ Թաղիադյանի «Ճանապարհորդության»՝ 19-րդ դարի սկզբին գյուղն ունեցել է մոտ 800 տուն, այլ վկայությունների համաձայն՝ 200-300՝ մոտ 2200 բնակիչներով, որից 1600-ը՝ հայեր: Վերջիններս զբաղվել են անասնապահությամբ, դաշտավարությամբ և այգեգործությամբ: Ակոռին հայտնի է եղել իր խաղողով և գինիով: Ունեցել է երկու վարժարան: 1840 թ. երկրաշարժից հետո գյուղի տարածքը ծածկվեց տիղմով, ժայռաբեկորներով ու սառցաբեկորներով:

ԲԱՀԱՐԼՈՒ, Баарлу, **Բահարլի, Բհարլու, Պահարլու** – Սուրմալուի հայկական նշանավոր գյուղերից է, գտնվում էր Իգդիր Մավա գյուղից հյուսիս: 1906 թվականին ունեցել է 1153 բնակիչ: Զբաղվել են երկրագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ:

ԲԼՈՒՐ, Блур, Плюр, **Պլուր –** Որոշ աղբյուրներում հիշատակվում է նաև որպես ավան, գյուղաքաղաք: Գտնվում էր Իգդիրից մոտ 5 կմ հեռավորության վրա, Արաքսի միջին հոսանքի ձախ կողմում, այգեվետ վայրում, խճուղային ճանապարհին: Գյուղից հյուսիս ընկած է համանուն լեռը: 20-րդ դարի սկզբին՝ ունեցել է 192 տուն: Նույն շրջանի մեկ այլ վիճակագրական տեղեկության համաձայն՝ Բլուրի բնակչության թիվը հասցված է մինչև 300 տան: «Ցուցակ ձեռագրաց»-ում հիշատակված է որպես գրչության կենտրոն:

ԴԱՇԲՈՒՐՈՒՆ, Дашбурун – Սուրմալուի ամենանշանավոր և համեմատաբար մեծ բնակչություն ունեցող գյուղերից է: Եղել է հին ուրարտական նշանավոր Մենուախինիլի քաղաքի բնակատեղին:

ԷՎՋԻԼԱՐ, Эвджилар - Սուրմալուի հայկական գյուղերից է: 1906 թվականին ունեցել է 1690 հայ բնակիչ, եկեղեցի և վարժարան: Գյուղացիների հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունը, այգեգործությունը և անասնապահությունը:

ԹԵՅՋՐԼՈՒ, Тейджрлу - Գտնվել է Իգդիրից հյուսիս-արևելք, այգեվետ վայրում: 1906 թվականին գյուղն ունեցել է 1049 բնակիչ:

ԻԳԴԻՐ, Игдир - Գյ ո ւ ղ, ա վ ա ն, գյուղաքաղաք, Սուրմալուի գավառի **վարչական կենտրոնը**: Գտնվում է Երևանից 40 կմ հարավ-արևմուտք, Երևան-Բայազետ խճուղու վրա, Արաքս գետի աջափնյա մասում, հարթավայրում: 20-րդ դարի սկզբներին ունեցել է ավելի քան 10.000 բնակիչ: Հայերի մի մասի նախնիները այստեղ էին գաղթել Պարսկաստանի Խոյի և Սալմաստի շրջաններից 1828-1829 թվականներին: Շրջակայքի ճահճուտների ու աղուտների պատճառով Իգդիրի կլիման վատառողջ էր: Բնակչությունը զբաղվում էր այգեգործությամբ, պտղաբուծությամբ,

արհեստներով ու առևտրով: Ունեցել է երեք եկեղեցի, արական և իգական վարժարաններ: Հիշատակվում է 15-րդ դարից: 1555-1828 թթ. ժամանակաշրջանում գտնում էր Պարսկաստանի տիրապետության տակ: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով միացվեց Ռուսաստանին և մտցվեց Երևանի նահանգի Սուրմալուի գավառի մեջ:

ԻԳԴԻՐ - ՄՈՎԱ /Մավա/, Игдир - Мо/а/ва - Գտնվում էր Իգդիրի հարևանությամբ՝ արևելյան կողմում, հարթավայրային շրջանում: 1907-ին՝ ունեցել է 1772 գերազանցապես հայ բնակիչ: Զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և արհեստներով: 1920-21 թթ. տեղի հայությունը գաղթել է Արարատյան դաշտի գյուղեր:

ԽԱԼՖԱԼՈՒ, Халфалу - Սուրմալուի հայկական գյուղերից է: 20-րդ դարի սկզբին ուներ մոտ 100 տուն՝ 1080 բնակչով, վարժարան: Զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղի հարավում՝ Վանքատեղի կոչված վայրում, 1874 թվականին գտնվել են արծաթյա և պղնձե դրամներ, 13-14-րդ դարերի տապանագիր: Հայ-թուրքական և հայ-քրդական ընդհարումների ժամանակ եղել է շրջանի հայության պաշտպանական կենտրոններից մեկը: Մյուս գյուղերի նման տեղի հայ բնակչությունը ևս տեղահանվեց 1920 թվականին:

ԿՈՂԲ, Кохб, Кулпи - **Ղուզլուջա, Թուզլուջա, Խուլբի, Կոխբ, Կողբ Նոր, Կուլպի, Ղուլփ, Տուզլուջա** - Ավան, գյուղաքաղաք, քաղաք Սուրմալուի գավառում, Արաքսի աջակողմյան վտակ Կողբ (հնում՝ Վարդամարգ) գետի ափին, Բարդող լեռան հյուսիսարևմտյան ստորոտին: Հնում վկայված է Այրարատ աշխարհի ճակատք գավառում, որպես բազմամարդ և աղահանքերի մեծ պաշարներ ունեցող նշանավոր ավան: 9-11-րդ դարերում եղել է Բագրատունիների արքունի տիրույթը: Ստ. Յրբելյանը հիշատակում է որպես գյուղաքաղաք: Թուրքական տիրապետության շրջանում աղի հանքերի համար անվանվել է նաև Թուզլուջա: Հնի մոտ կառուցված նոր ավան, նախկինից տարբերելու համար, երբեմն անվանվել է Նոր Կողբ: Վերջինս 19-րդ դարի երկրորդ կեսերին ուներ մոտ 1000 տուն: Կողբն ունեցել է Վերին և Ներքին թաղեր, որոնցում գործում էին Ս. Գևորգ և Ս. Աստվածածին (ըստ այլոց՝ Ս. Խաչ և Ս. Երրորդություն) եկեղեցիներն ու վարժարանը (1897 թ.-ից): Բնակավայրը հարուստ է եղել հնություններով: 19-րդ դարի վերջերին հին ավանի տեղում դեռևս նշմարվում էին երեք եկեղեցիների ավերակները: Ավանի տարածքում և շրջակայքում աղահանքի մոտ կային ուխտավայրեր, Եզնիկ հայրապետի և Ս. Գրիգոր Լուսավորչի անունով մատուռներ, Թուխ Մանուկ և Ս. Գևորգ անունով: 1921 թ. Կարսի պայմանագրով Կողբը ևս անցավ Թուրքիային: Նրա բնակչությունը 1920 թվականին ենթարկվեց կոտորածի ու բռնագաղթի, բնակություն հաստատեց Արարատյան դաշտի գյուղերում ու Երևանում: Կողբը մեծանուն փիլիսոփա Եզնիկ Կողբացու (5-րդ դ) ծննդավայրն է:

ՀԱԽՎԵ/Ր/ԻՍ, Ахве/р/ис, **Հախվերին, Հախվերսի** - Գյուղը գտնվել է Իգդիր քաղաքից հյուսիս-արևմուտք:

ՂԱԶԻ-ՂՇԼԱՂ, Гази-Гшлаг, **Գազըգշլաղ, Կազիկշլակ, Կազիղշլաղ –** Հայկական գյուղ է, գտնվել է Իգդիրից հյուսիս: 1906 թվականին ունեցել է 765 բնակիչ: Զբաղվում էին անասնապահությամբ, երկրագործությամբ, մասամբ՝ այգեգործությամբ:

ՄՈԼԼԱ - ԿԱՄԱՐ, Молла-камар – Համեմատաբար քիչ բնակչություն ունեցող հայկական գյուղերից է: 1829-1932 թթ. ունեցել է 332 հայ բնակիչ:

ՄՈՒՐՇՈՒԴ - ԱԼԻ ՂՇԼԱՂ, Муршуд -Али Гшлаг - Մուրշուդ-Ալի ղշլաղը համեմատաբար փոքր բնակչություն ունեցող գյուղերից է, կարելի է ասել նույնիսկ՝ գյուղակ: 1829-32 թթ. ունեցել է ընդամենը 8 տուն՝ 45 բնակչով:

ՆԱՋԱՖԱԼԻ, Наджафали, **Նաճաֆալի, Նաջաֆ Ալի**, - Սուրմալուի հայկական գյուղերից է: Հայտնի է եղել իշխանությունների հանդեպ իր անհնազանդությամբ: Զբաղմունքը նույնն էր, ինչ Սուրմալուի հայկական մյուս գյուղերինը՝ անասնապահություն, երկրագործություն, այգեգործություն:

ՉԻԼՖԻՔՅԱՐ, Çèëôèêàð - Սուրմալուի գավառի արևելյան մասի գերազանցապես հայերով բնակեցված գյուղ: Առանձնապես աչքի չի ընկել գավառի մյուս հայկական գյուղերի համեմատությամբ:

ՓԱՆԻԿ, Ïàíèê- Գյուղ Իգդիրից 7 կմ հյուսիս, Արաքս գետի աջ կողմում, բերրի և այգեվետ հարթավայրում: Գյուղի արևելյան կողմում կան անտառներ: 1829-32 թթ. ունեցել է 265 բնակիչ (44 տուն), 1906 թվականին՝ 1181 բնակիչ (244 տուն) և եկեղեցի: Զբաղվում էին դաշտավարությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ: Գյուղի մոտ կան հին ավերակներ: 20-րդ դարի սկզբին հայտնի էր ինքնապաշտպանական կռիվներով:

Айказ Оганесян, Некоторые вопросы народонаселения Сурмалийского уезда, - В статье на основе архивных документов и материалов периодической печати представлена целостная картина народонаселения Сурмалинского уезда, выявлена ведущая роль армян в экономике и культуре края.

Haykaz Hovhannisyan, Some issues of population of Surmalu district, - The comprehensive picture of Surmalu district is revealed in the article on the basis of archive documents and materials of the press periodicals, as well as the leading role of Armenians in economics and cultural life.